ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԵԿՈՒՅՑ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և վերանայման հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մինասյանի զեկուցագրի՝ տեղի ունեցավ ԱԲՀ-ի Գիտական խորհրդին կից ՈԱ հանձնաժողովի նիստը, որտեղ լսվեց և հաստատվեց «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերի բենչմարքինգ կազմակերպելու պլանը ***(Հավելված 1/Զեկուցագիր, Հավելված 2 /Պլան):***

Բենչմարքինգի աշխատանքային խմբի կազմը՝

1. Ա.Մինասյան /խմբի ղեկավար, ծրագրի պատասխանատու/
2. Հ.Հակոբյան /«Ստոմատոլոգիա» ծրագրի համակարգող/
3. Տ.Կարապետյան /«Բուժական գործ» ծրագրի համակարգող/
4. Ա.Օվչյան /ամբիոնի վարիչ/
5. Հ.Ջավրուշյան /Ամբիոնի վարիչ/
6. Ն.Հունանյան /Ամբիոնի վարիչ/
7. Ա.Բաբասյան /ուսանող/

Փուլ 1. Բենչմարքինգի առարկայի որոշում

Ուսումնասիրել և վերլուծել բժշկական կրթություն իրականացնող բուհերի ուսումնական պլանները և դասավանդման գործընթացը:

Փուլ 2. Բենչմարքինգի գործընկերոջ որոշում

Համաձայն նախնական պայմանավորվածության՝ 26.12.2019թ. ԱԲՀ-ի ռեկտորի կողմից պաշտոնական գրություն է ուղարկվել Բելառուսի Հանրապետության բուհերի, մասնավորապես՝ Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի» և «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանի» ռեկտորներին ***(Հավելված 3 /Պաշտոնական գրություններ, Հավելված 4 /Պատասխան գրություն)***:

Փուլ 3. Տեղեկատվության հավաքագրման օպտիմալ եղանակի որոշում

Բելառուսի Հանրապետության բժշկական բուհերի հետ պաշտոնական պայմանավորվածության շրջանակներում 16.01.2020թ. տեղի ունեցավ առցանց առաջին հանդիպումը, որտեղ եռակողմ հանդիպմանը քննարկվեցին պլանով նախատեսված աշխատանքային գործողությունները ***(Հավելված 5 /Արձանագրություն №1/)***: Հաշվի առնելով բենչմարքինգի առարկան՝ որոշում կայացվեց այն ամբողջովին կազմակերպել

առցանց եղանակով՝ օգտագործելով համացանցային որևէ հարթակ: Քանի որ արդեն իսկ ձեռք էր բերվել պայմանավորվածություն բենչմարքինգի կազմակերպման ուղղությամբ, բելառուս գործընկերները պատրաստակամություն էին հայտնել տրամադրելու էլեկտրոնային տարբերակով ՄԿԾ-ին առնչվող ցանկացած փաստաթուղթ: Անհրաժեշտ տեղեկատվության օպերատիվ և արդյունավետ տրամադրելու նպատակով աշխատանքային խմբի անդամները տրամադրեցին թե՛ պաշտոնական, և թե՛ անձնական էլեկտրոնային փոստերի հասցեները:

Այսպիսով, բենչմարքինգի արդյունավետ անցկացման համար տեղեկատվության հավաքագրման օպտիմալ եղանակը իրականացվել է ամբողջովին էլեկտրոնային տարբերակով:

Փուլ 4. Մրցունակության ապահովման տեսակետից ցուցանիշների նմանությունների և տարբերությունների որոշում

Այն փաստը, որ ԱԲՀ-ի մեծ թվով շրջանավարտներ իրենց մասնագիտական գործունեությունը ներկայումս իրականացնում են ԱՊՀ երկրներում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում և Բելառուսի Հանրապետությունում, վկայում է այն մասին, որ բենչմարքինգի կազմակերպման գործընկերոջ ընտրությունը նպատակային է ***(Հավելված 6 /Շրջանավարտների ցանկ)***:

Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարանը» և «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանը» սերտորեն համագործակցում են ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ մի շարք եվրոպական բժշկական բուհերի հետ: Վերջին տարիներին ունեցել են բազում ձեռքբերումներ և հաջողություններ, ինչպես կրթական համակարգում, այնպես էլ մասնագիտական գործունեությունում ***(Հավելված 7 /Բելառուսի բուհերի վերաբերյալ տեղեկանք)***:

Բուհերի նմանությունները և տարբերությունները ներկայացված է աղյուսակում.

№	Բովանդակություն	Բելառուսի բժշկական համալսարաններ	Ավանդական բժշկության համալսարան
1.	Գործունեության տեսակ	**Բարձրագույն կրթություն**	**Բարձրագույն կրթություն**
2.	Իրավական կարգավիճակ	**Պետական/ հավատարմագրված**	**Մասնավոր/պետական հավատարմագրված**
3.	Իրականացվող ՄԿԾ	**Բուժական գործ 6 տարի** Մանկաբուժություն Բժշկահոգեբանական Բժշկակենսաբանական **Ստոմատոլոգիա 5 տարի**	**Բուժական գործ 6 տարի** **Ստոմատոլոգիա 5 տարի**
4.	Օտարերկրյա ուսանողներ	**Առկա են**	**Առկա են**
5.	Կրթական համակարգ	**ECTS**	**ECTS**

Ինչ վերաբերում է ցուցանիշների նմանությանը և տարբերությանը, ապա միակ տարբերությունը պետական կարգավիճակն է ու ուսանողների թվակազմը:

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացը կազմակերպում է Բելառուսի Հանրապետության Կրթության նախարարությունը 5 տարին մեկ անգամ (փաստաթղթերի աուդիտ): Գործընկեր բուհերում նույնպես ուսումնառում են օտարերկրյա քաղաքացիներ, ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական երկրներից: Իրականացվող «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության տևողությունը ևս համընկնում է, ինչպես տարիներով (6 և 5), այնպես էլ ECST կրեդիտներով (360 և 300):

Փուլ 5. Տեղեկատվության ապահովում բոլոր շահագրգիռ կողմերին բենչմարքինգի արդյունքների վերաբերյալ, նրանց ներգրավումը բենչմարքինգի անցկացման գործընթացում

Եռակողմ համաձայնության շրջանակներում ձևավորվել են համապատասխան աշխատանքային խմբեր: Բուհերի ղեկավարության կարգադրությամբ նշանակվել են աշխատանքային խմբերի ղեկավարներ, պատասխանատուներ և համակարգողներ: Համաձայն պայմանավորվածության՝ Բելառուս գործընկերները ԱԲՀ-ի բենչմարքինգի աշխատանքային խմբին են տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (**Հավելված 8. Բելառուսի ՄԿԾ-ների փաթեթներ**):

Տեղեկատվության փոխանակումը և քննարկումները կազմակերպվել են չորս առցանց հանդիպումների, ինչպես նաև բելառուս գործընկերների հետ ունեցած հեռախոսազրույցների ժամանակ:

Նախնական պայմանավորվածությամբ ԱԲՀ-ի բենչմարքինգի աշխատանքային խմբի ամփոփիչ զեկույցի նախագիծը կներկայացվի նաև բելառուս գործընկերներին:

Փուլ 6. Նպատակներին հասնելու և խնդիրների լուծմանն ուղղված հստակ ժամկետները և գործողությունները

Բենչմարքինգի նպատակն էր՝ ուսումնասիրել և վերլուծել բժշկական կրթություն իրականացնող բուհերի ուսումնական պլանները և դասավանդման գործընթացը:

Ներկայացված նպատակին հասնելու համար առաջադրվել էին հետևյալ խնդիրները.

1. ամրապնդել մասնագիտական նոր համագործակցության կապերը,
2. ուսումնասիրել և վերլուծել լավագույն փորձը՝ համագործակցության շրջանակ-ներում,
3. վերլուծված արդյունքների հիման վրա վերանայել ԱԲՀ-ում գործող ՄԿԾ-ների 2020-2021 ուստարվա ուսումնական պլանները,
4. կազմակերպել փորձի փոխանակում:

Բենչմարքինգը մեկնարկել է 2020 թվականի հունվարի 16-ին, ավարտվեց փետրվարի 28-ին: Այդ ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

1. Ավանդական բժշկության համալսարանի ռեկտոր Ն.Սարիբեկյանի կողմից ներկայացվել է պաշտոնական գրություն Բելառուսի Հանրապետության (ԲՀ)

«Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի» և «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանի» ռեկտորներին (26.12.2019 թ.):

2. Տրամադրվել է Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի» և «Վիտեբսկի պետական բժշկական համալսարանի» ռեկտորների համաձայնությունը ի պատասխան ԱԲՀ-ի ռեկտորի գրության (08.01.2020թ. և 09.01.2020թ.):
3. Կազմակերպվել են առցանց հանդիպումներ և քննարկումներ (արձանագրություններ № 1,2,3,4):
4. Հանդիպումների ընթացքում կազմակերպվել է անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում (Բելառուսի Հանրապետության բժշկական կրթության «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ի փաթեթներ): Նախատեսված ժամանակահատվածում ԱԲՀ-ի աշխատանքային խմբերը ուսումնասիրել են ներկայացված փաթեթները: Աշխատանքային խմբերի ղեկավարները պարբերաբար հեռախոսակապով (Viber) խորհրդակցել են բելառուս գործընկերների հետ, իսկ առցանց պաշտոնական հանդիպումների ժամանակ ներկայացվել են առաջացած խնդիրները, որոնք տեղում քննարկվել և ամփոփվել են:

Աշխատանքներն ամբողջությամբ իրականացվել են նախապես հաստատված բենչմարքինգի կազմակերպման պլանի համաձայն:

Փուլ 7. Պլանավորած միջոցառումների ամփոփում

1. Բենչմարքինգի մեկնարկով հնրավորություն ընձեռվեց ընդլայնել համագործակցության շրջանակը: Աշխատանքների ընթացքում կազմակերպված տարբեր հանդիպումների և քննարկումների շնորհիվ ԱԲՀ-ի անձնակազմը ձեռք բերեց մասնագիտական նոր համագործակցության կապեր, մասնավորապես ԲՀ բժշկական կրթություն իրականացնող միջազգային ճանաչում և հեղինակություն ունեցող համալսարանների հետ: ԱԲՀ-ի ղեկավարությունը ի պատասխան վերոհիշյալ բուհերի ղեկավարների պատասխան նամակների պատրաստակամություն է հայտնել ամրապնդելու արդեն իսկ ձեռք բերված համագործակցությունը: ԱԲՀ-ի ռեկտորի առաջարկությամբ պատրաստվում է հուշագիր եռակողմ համագործակցության ուղղությամբ: Նախնական պայմանավորվածությամբ այն կարող է կնքվել 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում:
2. Համաձայն Բելառուսի Հանարապետության բուհերի ռեկտորների պատասխան գրությունների Գրոդնոյի և Վիտեբսկի բժշկական համալսարանների ներկայացուցիչները ԱԲՀ-ի բենչմարքինգի աշխատանքային խմբին են ներկայացրել իրենց փորձը, իրականացվող համատեղ ծրագրերը, կլինիկական բազաներում կազմակերպվող մասնագիտական գործունեությունները, գիտական և մասնագիտական հետազոտությունների բնագավառները, մասնագիտական կողմնորոշման միջոցառումները և այլն:

3. Բելառուս գործընկերները ԱԲՀ-ի բենչմարքինգի աշխատանքային խմբին են տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր («Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ՄԿԾ փաթեթներ): Աշխատանքային խմբի կողմից այն հանգամանորեն ուսումնասիրվել և վերլուծվել են: Համագործակցության շրջանակներում համեմատվել են Բելառուսում և Հայաստանում իրականացվող բժշկական կրթական ծրագրերը, մասնավորապես՝ կրթական վերջնարդյունքները, հետագա ուսումնառության և մասնագիտական գործունեության շրջանակը և այլն (***Հավելված կից համեմատության աղյուսակը)***: Վերլուծված արդյունքները հնարավորություն կտան բենչմարքինգի աշխատանքային խմբին ՄԿԾ-ների վերանայումը և 2020-2021 ուստարվա ուսումնական պլանների մշակումը կազմակերպել ավելի նպատակային և արդյունավետ:
4. Եռակողմ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց բենչմարքինգի բարեհաջող ավարտից հետո 2020-2021 ուսումնական տարվա մեկնարկով կազմակերպել փորձի փոխանակում, մասնավորապես՝ փոխադարձ դասախոսությունների, գործնական պարապմունքների ուղղությամբ: Փոխադարձ դասախոսությունների կազմակերպման հստակ պլան-ժամանակացույցը կներկայացվի քննարկման և հաստատման ընթացիկ տարվա դեկտեմբերին:

Բենչմարքինգի աշխատանքային խմբի ղեկավար,

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մինասյան